ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ N 2

Փաստաբանի վարքագծի կանոնագրքում փոփոխությունների և լրացումների որոշման նախագծով խմբագրվող 9.1 կետի

1. **<u>Առաջարկվող դրույթը</u>**

Առաջարկվում է Կանոնագրքի 9.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«9.1 Կարգապահական պատասխանատվությունը արարքի կրկնակիության դեպքում

9.1.1 Մեկ տարվա ընթացքում երեք անգամ կարգապահական պատասխանատվության ենթարկված փաստաբանի կողմից կատարված սույն կանոնագրքի որևէ կանոնի խախտումը համարվում է ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում, բացառությամբ՝

ա. այն դեպքի, երբ խախտումները թույլ են տրվել մեկ վարույթի (նախաքննության, դատաքննության և այլ վարույթի) շրջանակում.

բ. Կանոնագրքի 9.1.2 կամ 9.1.3 ենթակետում նշված դեպքի, երբ նշված ենթակետի համաձայն փաստաբանի արարքը որակվել է որպես ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում:

9.1.2 Կարգապահական պատասխանատվության ենթարկված փաստաբանի կողմից մեկ տարվա ընթացքում նույնանման խախտում կատարելը համարվում է ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում, բացառությամբ՝

ա. սույն կանոնագրքի 2.9 կետում կամ 9.1.3 ենթակետում նշված դեպքի,

բ. այն դեպքի, երբ առաջին կարգապահական խախտման համար փաստաբանի նկատմամբ կիրառվել է ամենամեղմ կարգապահական տույժը՝ նկատողություն.

գ. սույն կանոնագրքի 4-րդ և 6-րդ գլուխներում նշված դեպքերի:

9.1.3 Առնվազն 18 (տասնութ) ամսվա անդամավճարի չափով պարտք ունեցող փաստաբանի կողմից հերթական որևէ ամսվա անդամավճարը չվճարելը համարվում է ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում: Առաջին անգամ սույն ենթակետի հիմքով հարուցված կարգապահական վարույթի արդյունքում փաստաբանի նկատմամբ Պալատի խորհուրդը կիրառում է նկատողություն կամ խիստ նկատողություն, եթե փաստաբանն ամբողջությամբ վճարել է պարտքի գումարը և Պալատի խորհրդի որոշումը կայացնելու օրվա դրությամբ Պալատի նկատմամբ անդամավճարի գծով որևէ պարտք չունի:

9.1.4 Սույն կետի 9.1.1 և 9.1.2 ենթակետերի իմաստով՝

ա. փաստաբանը կարգապահական պատասխանատվության ենթարկված է համարվում այն օրվանից, երբ ուժի մեջ է մտել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Պալատի խորհրդի որոշումը.

բ. փաստաբանի կողմից կանոնագրքի խախտում կատարելը հաշվարկվում է խախտման փաստացի կատարման օրվա դրությամբ, անկախ Պալատի խորհրդի որոշման կայացման կամ ուժի մեջ մտնելու պահից.

գ. մեկ տարվա ժամկետի հաշվարկը սկսվում է առաջին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշման ուժի մեջ մտնելու օրվանից.

դ. նույնանման խախտում է համարվում Կանոնագրքի նույն կետի կամ ենթակետի կանոնի խախտումը:»:

<u>Պարզաբանումը՝</u>

Կանոնագրքի այժմ գործող 9.1 կետի համաձայն՝

9.1 Կարգապահական պատասխանատվությունը արարքի կրկնակիության դեպքում

9.1.1 Մեկ տարվա ընթացքում երեք անգամ կարգապահական տույժի ենթարկված փաստաբանի կողմից սույն կանոնագրքի որևէ կանոնի խախտում թույլ տալը համարվելու է ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում:

9.1.2 Կարգապահական խախտում կատարելու համար կարգապահական տույժի ենթարկվելուց հետո մեկ տարվա ընթացքում նույն խախտումը կրկին կատարելը համարվելու է ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում, բացառությամբ սույն կանոնագրքի 2.9 կետում նշված դեպքերի:

Ստորև նշված աղյուսակում բերված է համեմատական վերլուծությունը անդամավճարների, վերապատրաստման դասընթացների և այլ խախտումների մասերով՝

Հարցադրումը	***Կանոնագրքի գործող տարբերակով***	***Կանոնագրքի խմբագրվող տարբերակով***
Եթե փաստաբանը պարբերաբար չի վճարում անդամավճարը, քանի ամսվա անդամավճար չվճարելու դեպքում կարող է տեսականորեն դադարեցվել արտոնագրի գործողությունը	***6 ամսվա հաշվարկով՝*** 1-ին հարուցում 3 ամսվա չվճարելու դեպքում. 2-րդ հարուցում՝ 1ամսվա, 3-րդ հարուցում՝ 1 ամսվա, 4-րդ հարուցում՝ 1 ամսվա	***18 ամսվա հաշվարկով*** Ընդ որում՝ 18 ամսից հետո, վարույթ հարուցվելու դեպքում, եթե փաստաբանը վճարումը կատարում է, չի կարող դադարեցվել արտոնագրի գործողությունը
Մեկ տարվա ընթացքում նույն խախտումը կրկին կատարելու դեպքում, տեսականորեն կարելի՞ է փաստաբանի արտոնագրի գործողությունը դադարեցվել	***Այո, բայց հետևյալ բացառությամբ՝*** Կանոնագրքի հետևյալ կետի կրկնակի (երկրորդ անգամ) խախտման դեպքը արտոնագրի գործողության դադա-ռեցում չի առաջացնում՝ ա/ 2.9 (Պալատի հետ փոխհարաբերություն)	***Այո, բայց հետևյալ բացառություններով՝*** Կանոնագրքի հետևյալ կետերի կրկնակի (երկրորդ անգամ) խախտման դեպքը արտոնագրի գործողության դադա-ռեցում չի առաջացնում՝ ա/ 2.9 (Պալատի հետ փոխհարաբերություն). բ/ 9.1.3՝ անդամավճար. գ/ 4-րդ գլուխ (հարաբերություններ դատարանների հետ).

		դ/ 6-րդ գլուխ (այլ մարմինների հետ փոխհարաբերություններ). ե/ երբ առաջին կարգապահական խախտման համար փաստաբանի նկատմամբ կիրառվել է ամենամեղմ կարգապահական տույժը՝ նկատողություն.
Մեկ տարվա ընթացքում երեք անգամ կարգապահական տույժի ենթարկված փաստաբանի կողմից կանոնագրքի որևէ կանոնի խախտում թույլ տալու դեպքում տեսականորեն կարելի՞ է փաստաբանի արտոնագրի գործողությունը դադարեցվել	***Այո, առանց բացառությամբ***	***Այո, բացառությամբ այն դեպքի, երբ խախտումները թույլ են տրվել մեկ վարույթի (նախաքննության, դատաքննության և այլ վարույթի) շրջանակում***
Վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու հիմքով կարգապահական պատասխանատվության մասով կարգավորումը նույն է, թե՝ փոխվել է	***Ընդհանուր կարգով***	***Ընդհանուր կարգով (չի փոխվել)***

Ինչպես երևում է համեմատությունից, նախագծով առավել հստակեցվել են կարգապահական պատասխանատվության հետ կապված կանոնները և առավել բարդացվել են արտոնագրի գործողությունը դադարեցնելու հիմքերը՝ խախտման կրկնակիության տեսակետից: